«Մեկ պատուհան» համակարգի միջոցով արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների ցանկը, գործառույթներն ու միասնական աշխատակարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-------- ---------- 2018 թվականի N - Ն

«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1404-Ն որոշմամբ հաստատված հավելվածի ծրագրի 3.3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Սահմանել՝

- «Մեկ պատուհան» համակարգի միջոցով արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումն իրականացնող Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների գործառույթներն ու միասնական աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի։

- «Մեկ պատուհան» համակարգի միջոցով արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվող պետական կառավարման մարմինները և այլ կազմակերպությունները, յուրաքանչյուրն իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում սույն կարգից բխող համապատասխան փոփոխություններ են կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ կառավարության

2018 թվականի ----------ի ------ի

N ---- - Ն որոշման

«ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են արտաքին առևտրի

իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական տեղեկատվական բազայի և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների այլ տվյալների ձևավորման, մաքսային գործի բնագավառում լիազորված մարմնի միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգերին ինտեգրման, արտաքին տնտեսական գործունեության (այսուհետ՝ ԱՏԳ) իրականացման համար անհրաժեշտ միասնական ձևաչափով մշակված փաստաթղթերի՝ շահագրգիռ մարմինների կողմից ավտոմատացված միասնական տեղեկատվական համակարգի միջոցով ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը համարվում է «Մեկ պատուհան» համակարգի միջոցով ԱՏԳ իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումն իրականացնող Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների (այսուհետ՝ պետական կառավարման մարմիններ և կազմակերպություններ) ու «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (trade.gov.am) ներդրված համապատասխան համակարգի միջև «Մեկ պատուհան» համակարգի միջոցով ԱՏԳ իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևավորման և տրամադրման ընթացքում տեղեկատվական և այլ տեսակի փոխգործակցության համակարգման իրավական հիմքը:
3. Սույն կարգով սահմանվում է, որ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների ու «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (trade.gov.am) ներդրված համապատասխան համակարգի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է պետական համակարգչային ցանցի և անվտանգ կապի այլընտրանքային այլ ուղիների միջոցով:

II. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ սահմանումներն ու հասկացությունները՝

- «Մեկ պատուհան» համակարգ՝ «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակում (trade.gov.am) ներդրված համապատասխան համակարգ.
- «Մեկ պատուհան» համակարգի տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ տեղեկատվական համակարգ)՝ էլեկտրոնային տեղեկատվական հաղորդակցության միջոցներ, որոնք օգտագործվում են շահագրգիռ կողմերի տվյալների մշակման և փոխգործակցության

համար՝ անվտանգ կապի ուղիներով.

- պետական մարմիններ և կազմակերպություններ՝ սույն որոշման N 2 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերին համապատասխան ԱՏԳ իրականացման համար իրավաբանական և ֆիզիկական անձանց փաստաթղթեր տրամադրող մարմիններ և կազմակերպություններ.
- հայտատու՝ անմիջականորեն իր անունից գործող կամ իր ներկայացուցչի միջոցով՝ ԱՏԳ իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման նպատակով հայտն ուղարկող ԱՏԳ իրականացնող իրավաբանական անձ կամ ֆիզիկական անձ.
- հայտ՝ «Մեկ պատուհան» համակարգի միջոցով ԱՏԳ իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման նպատակով թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով հայտատուի կողմից ներկայացվող փաստաթուղթ.
- ուղեկցող փաստաթղթեր՝ ԱՏԳ իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման նպատակով հայտին կից ներկայացվող փաստաթղթեր.
- տվյալ՝ տեղեկատվություն, ներկայացված որոշակի ձևաչափով, որը հնարավոր է ոչնչացնել, խմբագրել, պահպանել, մշակել տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

III. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ «ՄԵԿ ՊԱՏՈՒՀԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

5. ԱՏԳ իրականացման համար փաստաթղթերի ստացման նպատակով պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին հայտատուի կողմից հայտը ներկայացվում է «Մեկ պատուհան» համակարգի միջոցով:
6. «Մեկ պատուհան» համակարգի միջոցով հայտը և դրան կից ուղեկցող փաստաթղթերը ներկայացվում են հայտատուի ծածկանվան (login) և գաղտնաբառի (password) առկայության պարագայում տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ՝ որպես էլեկտրոնային փաստաթուղթ՝ վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ թղթային կրիչով՝ դրանց լուսապատճենված էլեկտրոնային օրինակների ներկայացմամբ: Հայտին կից ներկայացվող ուղեկցող փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: «Մեկ պատուհան» համակարգի միջոցով հայտին կից ներկայացման ենթակա ուղեկցող փաստաթղթերը կարող են չներկայացվել, եթե դրանցում առկա պահանջվող տեղեկատվությունը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով «Մեկ պատուհան» համակարգում կիրառվող ստանդարտացված փաստաթղթում և վավերացվում հայտատուի

էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

7. Թղթային կրիչի լուսապատճենի կամ էլեկտրոնային փաստաթղթի ձևով «Մեկ պատուհան» համակարգի միջոցով հայտը ստանալու դեպքում համակարգն իրականացնում է ձևաչափա-տրամաբանական հսկողություն՝ ստուգելով հայտի լրացման ճշտությունը, ներմուծվող կամ արտահանվող ապրանքների՝ ԵՏՀ խորհրդի 16.07.2012թ. «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը և միասնական մաքսային սակագինը հաստատելու մասին» N 54 որոշմամբ հաստատված ԱՏԳ ԱԱ ծածկագրի համար ներկայացման ենթակա ուղեկցող փաստաթղթերի ամբողջականության առկայությունը:
8. Ձևաչափա-տրամաբանական հսկողության արդյունքում ներկայացված տվյալներում անհամապատասխանությունների կամ անճշտությունների բացակայության դեպքում, «Մեկ պատուհան» համակարգն ընդունում է հայտը և դրան կից ներկայացված ուղեկցող փաստաթղթերը, ինչի վերաբերյալ, «Մեկ պատուհան» համակարգի գործիքակազմի միջոցով, ծանուցում է հայտատուին:
9. Հայտի ընդունումից հետո տեղեկատվական համակարգերի կողմից հայտը փոխանցվում է համապատասխան պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին:
10. Համապատասխան պետական կառավարման մարմիններում և կազմակերպություններում հայտի ստացման պահից 3 աշխատանքային ժամվա ընթացքում նշանակվում է պատասխանատու կատարող և ստուգվում է ուղեկցող փաստաթղթերի ամբողջականությունը, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը և պատասխանատու կատարողի վերաբերյալ տվյալները մուտքագրվում են տեղեկատվական համակարգ: Սույն կետում նշված ժամկետը կասեցվում է՝ պատասխանատու կատարողի կողմից փաստաթղթերի թերի ներկայացման և (կամ) սխալների հայտնաբերման դեպքում, ինչի վերաբերյալ պատասխանատու կատարողը՝ հղում կատարելով լրացման և (կամ) ներկայացման համար հիմք հանդիսացող իրավական ակտին, համապատասխան գրառում է կատարում համակարգում՝ ծանուցելով հայտատուին: Կասեցված ժամկետի վերահաշվարկը սկսվում է համապատասխան ծանուցման հիման վրա հայտատուի կողմից ներկայացված լրամշակված փաստաթղթերի փաթեթը պատասխանատու կատարողի ստանալու ամսաթվից, ինչի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում համակարգում: Սույն կետում նշված՝ համապատասխան պետական կառավարման մարմիններում և կազմակերպություններում հայտի ստացման ամսաթիվը համարվում է «Մեկ պատուհան» համակարգում հայտի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի (լրամշակված) փաթեթի մուտքագրման ամսաթիվը՝ ըստ «Մեկ պատուհան» համակարգում ցուցադրվող համակարգային ժամանակի արժեքի:
11. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ապրանքների հավաստագրման պահանջ սահմանված լինելու պարագայում համապատասխան պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները պատասխանատու կատարող նշանակվելուց և ստուգելուց հետո երեք աշխատանքային ժամվա ընթացքում հավաստագրման գործընթացը համաձայնեցնում են

հայտատուի հետ: Հավաստագրման գործընթացի վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմնի և կազմակերպության ու հայտատուի համաձայնության դեպքում կիրառվում են սույն կարգի 12-րդ կամ 13-րդ կամ 14-րդ կետերով սահմանված դրույթները: Հավաստագրման գործընթացի վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմնի և կազմակերպության ու հայտատուի միջև անհամաձայնության դեպքում կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթները:

12. Ապրանքի նմուշի լաբորատոր փորձարկումների/փորձաքննության անցկացման դեպքում համապատասխան պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները՝

- համագործակցում են հայտատուի հետ ապրանքի փորձանմուշ վերցնելու համար.
- լաբորատոր փորձարկումների/փորձաքննության անցկացումից հետո, անհրաժեշտության դեպքում իրականացնում են փաստացի կատարված ծախսերի հաշվարկ և տեղեկատվական համակարգի միջոցով ծանուցում են հայտատուին վճարման ենթակա գումարի չափի վերաբերյալ:

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերից կախված՝ պետական մարմինները և այլ կազմակերպությունները տեղեկատվական համակարգում տեղեկատվություն են մուտքագրում փաստաթղթերի պատրաստման ընթացքում իրականացվող գործողությունների կատարման կարգավիճակի վերաբերյալ:
14. Պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները փաստաթղթի տրամադրման կամ տրամադրումը մերժելու վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում համապատասխան որոշման կայացումից առավելագույնը երեք ժամ հետո տեղեկատվական համակարգում տեղեկություններ են մուտքագրում փաստաթղթի տրամադրման կամ հիմնավորված մերժման վերաբերյալ: Փաստաթղթի տրամադրումը մերժելու դեպքում պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները տեղեկատվական համակարգում նշում են մերժման համար հիմք հանդիսացող պատճառները և իրավական հիմքերը:
15. Պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից տրամադրվող փաստաթղթերի պատրաստ լինելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը համակարգում մուտքագրվելուց հետո երեք ժամվա ընթացքում հայտատուն ծանուցվում է փաստաթղթերի պատրաստ լինելու վերաբերյալ:
16. Փաստաթղթերը համակարգի միջոցով հայտատուին է տրամադրվում վերջինիս կողմից պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների մատուցած ծառայությունների համար օրենքով սահմանված համապատասխան վճարումներն ամբողջությամբ կատարելուց հետո, եթե յուրաքանչյուր փաստաթղթի տրամադրման համար նախապես չեն կատարվել տվյալ փաստաթղթի ստացման համար օրենքով սահմանված վճարումները կամ այլ բան

նախատեսված չէ օրենսդրությամբ: Սույն կետում նշված վճարումների ամբողջական կատարման վերաբերյալ հայտատուն համապատասխան նշում է կատարում «Մեկ պատուհան» համակարգում՝ կցելով վճարման համար հիմք հանդիսացող փաստաթուղթը:

17. Մաքսային մարմինը մաքսային ձևակերպումների ընթացքում հիմք են ընդունում «Մեկ պատուհան» համակարգում տեղադրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ձևին համապատասխան էլեկտրոնային փաստաթղթերը:
18. «Մեկ պատուհան» համակարգի միջոցով հայտատուն ծանուցվում է փաստաթղթերի պատրաստման ընթացքում «Մեկ պատուհան» համակարգում իրականացված՝ իրեն վերաբերող նշումների վերաբերյալ:
19. Մաքսային գործում ներգրավված պետական կառավարման մարմինները և կազմակերպությունները, յուրաքանչյուրն իրենց վերապահված հասանելիության աստիճանին համապատասխան, կարող են օգտվել «Մեկ պատուհան» համակարգում տեղադրված էլեկտրոնային տեսք ունեցող ձևակերպված փաստաթղթերից և տվյալներից:
20. «Մեկ պատուհան» համակարգում տեղադրված՝ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների համապատասխան լիազորություններ ունեցող անձանց կողմից օգտագործվող տեղեկատվությունը սույն կարգի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն՝ կարող է օգտագործվել բացառապես ծառայողական օգտագործման նպատակով:
21. Սույն կարգի 20-րդ կետում նշված անձինք իրավունք չունեն հրապարակել, անձնական նպատակներով օգտագործել ՀՀ օրենսդրությամբ պահպանվող տեղեկատվությունը:
22. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գաղտնիք համարվող տեղեկատվությունը սույն կարգի 20-րդ կետում նշված նպատակից բացի այլ նպատակով օգտագործելու կամ հրապարակելու համար նույն կետում նշված անձինք կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հավելված N 2

ՀՀ կառավարության

2018 թվականի ----------ի ------ի

N ---- - Ն որոշման

ՑԱՆԿ

«Մեկ պատուհան» համակարգի միջոցով արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների

Հ/հ	**Պետական կառավարման մարմնի, այլ կազմակերպության անվանումը**	**Տրամադրվող փաստաթղթի**
1.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	1. Ժամանակավոր, կենսաբ պայմանավորված արտակա առաջացնող դեպքերի հայտ ախտահանման, կրծողազեր միջատազերծման աշխատա մասին տեղեկանք.
2.	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	1. Հայաստանի Հանրապե արտաքին առևտրի դեպքու ենթակա ռադիոէլեկտրոնայի

		քաղաքացիական օգտագործ հաճախականության սարքե ներկառուցված կամ այլ ապ մտնող սարքերի ներմուծման
3.	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն	1. Վտանգավոր թափոնների հոգեմետ նյութերի պրեկուրս թունավոր նյութերի, օզոնայի նյութերի և դրանք պարունա անդրսահմանային փոխադր լիցենզիաներ, եզրակացությ փաստաթուղթ). 2. ՀՀ տարածքից բուսաբան և առանձին նմուշներ արտա ներմուծելու թույլտվություն. 3. ՀՀ տարածքից վայրի կեն արտահանման և ՀՀ տարած թույլտվություն. 4. Վայրի կենդանիներ և առ որոնց տեղափոխումը Եվրա միության մաքսային տարած արտահանման դեպքում-մեն 5. Հայաստանի Հանրապետ Հանրապետության, Ղազախ Հանրապետության և Ռուսա Կարմիր գրքում ընդգրկված անհետացող վայրի կենդանի տեսակներ ու դրանց մասեր որոնց տեղափոխումը Եվրա միության մաքսային տարած արտահանման դեպքում-մեն 6. Կենդանական ու բուսակա տեսակներ, որոնք ընկնում ե գտնվող վայրի կենդանական աշխարհի տեսակների միջա կոնվենցիայի գործողությունն տեղափոխումը Եվրասիակա միության մաքսային տարած ՍԻԹԵՍ թույլտվություն (հավ
4.	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն	1. Հայաստանի Հանրապետ տարածքով փոխադրման հ սահմանափակումների ենթ արժեքների, ազգային արխի փաստաթղթերի, արխիվայի փաստաթղթերի արտահան 2. Մշակութային արժեքներ ժամանակավոր արտահանմ եզրակացություն (թույլատրո
5.	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն	1. Ռազմական նշանակությ ներմուծման և արտահանմա 2. Ռազմական նշանակությ

		տարանցիկ փոխադրման լից 3. Ռազմական նշանակությ առևտրի միջնորդական գոր 4. Մարտական զենքի արտ
6.	Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածների և բնական պաշարների նախարարություն	1. Հայաստանի Հանրապետ արտաքին առևտրի դեպքու ենթակա ընդերքի մասին տե արտահանման լիցենզիաներ 2. Հայաստանի Հանրապետ արտաքին առևտրի դեպքու ենթակա հանքային հումքի ս արտահանման լիցենզիաներ
7.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	1. «Վերամշակում՝ մաքսայի մաքսային ընթացակարգով վերամշակման թույլտվությո 2. «Վերամշակում՝ մաքսայի մաքսային ընթացակարգով վերամշակման թույլտվությո 3. «Վերամշակում՝ ներքին ս մաքսային ընթացակարգով վերամշակման թույլտվությո
8.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	1. Առանձին տեսակի ապրա (կամ) արտահանման լիցենզ 2. Ծածկագրային (կրիպտոգ միջոցների ներմուծման և (կ լիցենզիա կամ եզրակացությ փաստաթուղթ).
9.	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	Երրորդ երկրներից քաղաքա ծառայողական զենքի, դրա հ (բաղկացուցիչ) մասերի ու փ ներմուծման, արտահանման փոխադրման եզրակացությ փաստաթուղթ).
10.	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	1. Արտահանման անասնա սերտիֆիկատ՝ 6ա, 6բ, 6գ, 6 6ի հայերեն ռուսերեն, արտա անասնաբուժական սերտիֆ 6ե, 6զ, 6է, 6ը, 6թ, 6ժ, 6ի հայ 2. Միասնական անասնաբ 1, 2, 3, 4. 3. Սննդամթերքի, սննդամթ նյութերի և սննդային ու կենս հավելումների ներմուծման ս սերտիֆիկատ 7բ.

4. Սննդամթերքի, սննդամթ
նյութերի և սննդային ու կեն
հավելումների արտահանմա
սերտիֆիկատ 7ա, հայերեն

5. Սննդամթերքի, սննդամթ
նյութերի և սննդային ու կեն
հավելումների արտահանմա
սերտիֆիկատ 7ա, հայերեն

6. Մարդու սպառման համա
և այլ մեղվաբուծական արտ
արտահանման առողջության

7. Մարդու սպառման համա
կենդանիների արտահանմա
սերտիֆիկատ.

8. Արտահանման բուսասան
հավաստագիր, վերաարտահ
բուսասանիտարական հավ
բուսասանիտարական կարգ
(վերահսկողության) ակտ.